

ԽԱՉԻԿ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

**ԿՈՄԻՏԱՍԻ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ
ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆԻՑ**

«Ոչ է պարմություն ճշմարիտ
առանց ժամանակագրության»:
Մովսես Խորենացի
1899



Յունուար 10, Բեռլին - Դուբիսկա Լուդովիկան
իր լուսանկարը «Բարեկամական յիշարակ բեռլինեան օրերի» գերմաներէն գրութեամբ նուիրում է Կոմիտասին:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ., 225:

Յունուար 12/1, Բեռլին – Կոմիտասը մշակում է
«Ա՛յո, մարալ ջան» մեներգը:

Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 1, Եր., 1969, էջ 136-138, 187:

Յունուար, Բեռլին - Կոմիտասը Լերմոնտովի
թարգմանության հիման վրայ գրում է Գևորգի «Լեռնային գագաթներ» խորագրով ռոմանսը:

Ի. Լ. Նոյեան, Կոմիտաս, Եր., 1969, էջ 121:

Յունուար - փեբրուարի սկիզբ, Բեռլին – Օսկար Ֆլայշէրի նախաձեռնութեամբ
հիմնադրում է «Միջազգային երաժշտական ընկերութեան» Բեռլինի մասնաճիւղը, որին
անդամակցելու հրաւեր է ստանում նաեւ Կոմիտաս վարդապետը:

Կոմիտասը պարպառություն է ստանձնում «...Շարունակ թղթակցելու եւ առիաստրակ
արեւելեան երաժշտութեան մասին ուսումնասիրություններ փրկու»:

Կոմիտաս, Նամակներ, Եր., 2000, էջ 94:

:

Փեբրուար 8, Էջմիածին – Կաթողիկոս Մկրտիչ Խրիմեանը կոնդակով Սինոդին
թոյլարքում է «Մակար Եկմալեանի քառաձայն Պարարագի արարողությունը փարածել
եւ գործադրել մեր եկեղեցիների մէջ». այս առիթով թեմակալ առաջնորդներին հրաման է
տրւում «ուղարկել իրենց խմբապետներին եւ կարող անձանց պ. Եկմալեանցի մօտ ուսանե-
լու»:

«Արարար», Է., 1899, թ. 3-4, էջ 99:

Փեքրուար 18, Բեռլին – Օսկար Ֆրայշլերի նախաձեռնությամբ փեղի է ունենում «Միջազգային ընկերության» Բեռլինի մասնաճիղի հիմնադրման կազմակերպչական աշխատանքների նախապարաստմանը նուիրում առաջին նիստը, որին մասնակցում է նաև ընկերության անդամ Կոմիտաս վարդապետը:

Ընդունում է ՄԵԸ մասնաճիղի նախնական կանոնագրքի նախագիծը:

Zeichzift der Internationalen musikgechaft...Լայպցիգ, 1899, 1-ին փեղը, էջ 46

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 1100:

Մարտ 4, Բեռլին – Կոմիտասը գնում է Ն. Կյոխի «Երաժշտական լեքսիկոն», Էկա-րիուս-Ջիլերի «Լատական կրթություն», Բեթհովենի «Երգերի ժողովածու» և Ռոսսինիի «Վիլհելմ Տելլ» (օպերայի կլավիրը) գերմաներեն գրքերը:

ՉԱԳԱԹ, Կոմիտասի ֆ. 953, 1005, 1258, 1304:

Յունուար – Մարտ, Բեռլին – Կոմիտասը Ֆրեդերիկ Վիլհելմ համալսարանում լսում է հեպտեալ դասախոսությունները.

1. Միջնադարեան երաժշտության պատմություն, պրոֆ. Օ. Ֆրայշլեր,
2. Մոցարտի կեանքը և ստեղծագործությունը, դոկ. Ֆրիդլանդեր,
3. Ժժ. դարի երաժշտության պատմություն, պրոֆ. Օ. Ֆրայշլեր,
4. Գերմանական երգը, դոկ. Ֆրիդլանդեր,
5. Երաժշտական-փեսական վարժություններ, դոկ. Ֆրիդլանդեր,
6. Վարժություններ կոնսերվատիվում, դոկ. Ֆրիդլանդեր,
7. Նին Յունաստանի երաժշտության մասին, պրոֆ. Բելերման:

Կոմիտաս, Նամակներ, էջ 91:

Նոյն շրջանում, Բեռլին – Կոմիտասը Ռիխարդ Շմիդտի մասնատր երաժշտանոցում շաբաթական մէկ ժամ լսում է դասախոսություն «գործիքագիտություն. գործիքաւորման ուսուցում» թեմայով:

Նոյն փեղում:

Մարտ, Բեռլին – Կոմիտասը Ռիխարդ Շմիդտի երաժշտանոցում լրացնում է թերի թողած առարկաներից մէկը՝ սկսում է «երգեցողության և ձայնամարզության դասեր առնել», որն ըստ նրա, «անպայման անհրաժեշտ է խմբական երգեցողության և առհասարակ ճեմարանական խմբի ձայները կրթելու և կոկելու համար»:

Նոյն փեղում, էջ 94:

Մարտ, Բեռլին – Ռիխարդ Շմիդտը փորձում է Կոմիտասի ձայնը և յայտնում, որ նա «բարիպոն է» ու «լիովին ամփոփում է բարձր փենորի և սփորին բարիպոնի ամբողջ փարա-

ծուրթինը 2 3/4 ութնեակ 20 ասպիճան»։ Ու Շմիդտը նաև յայտնում է, որ Կոմիտասի «ձայնի մեջ ձուլուած է համագումարը թէ՛ քրեանորի ճկունութեան եւ թէ՛ բարիպոնի փափկութեան»։

Նոյն տեղում։

Մարտ 19, Բեռլին – Կոմիտասը նամակ է գրում Կարապետ Կոստանեանին եւ յայտնում է նրան, որ «Compositione Lehren»-ը կաւարքի եկող ամսին։ Նամակում ասում է այն մասին, որ առաջին վեցամսեակում մնում է երկու առարկայ լսելու համալսարանում եւ՝ ֆիլ-հարմոնիա նուագելը գրեթէ «աւարպետու վրայ եմ»։

Նամակում Կոմիտասը անդրադառնում է նաև միջազգային երաժշտական ընկերութեան Բեռլինի ճիւղի գործունէութեանը, այնպէս իր ուսուցչապետ Օսկար Ֆլայշէրի ունեցած դերին եւ իր անդամակցութեանը։

Վերջում կրկին խնդրում է. «Եթէ հնարատր է, իմ թոշակներս միշտ ամսագլխին ուղարկել-կարգադրելու. սաստիկ նեղում եմ, խոշոր ծախքեր ունեմ այժմ»։

Նոյն տեղում, էջ 93-94։

Ապրիլի սկիզբ, Վիեննա - Միխայիլեան միաբանութեան անդամ Կ. Գաբրիէլ Մեննիշեանը իր թարգմանած եւ Կոմիտասի խմբագրած Լեւոն Մսերեանցի «Նայերէն բարբառախօսութիւն» գրքոյն ջերմ ու յարգալից մակագրութեամբ նուիրաբերում է Կոմիտաս վարդապետին եւ յանձնարարում է Կ. Վարդան Միքայէլեանին այդ գիրքն ուղարկել Բեռլին՝ Կոմիտաս վարդապետին։

«Գրական թերթ», Եր., 1991, թ. 18, տին թ. 10 նամակը։

Ապրիլի սկիզբ, Վիեննա - Միխայիլեան միաբանութեան անդամ հայր Վարդան Միքայէլեանը նամակ է գրում Բեռլին՝ Կոմիտաս վարդապետին։ Նա առջնութեւն նամակին Կոմիտասին է ուղարկում Գաբրիէլ Մեննիշեանի յանձնարարած Լեւոն Մսերեանցի «Նայերէն բարբառախօսութիւն» գրքոյնը։

Նոյն տեղում։

Ապրիլ 24, Բեռլին – Կոմիտասը պատասխան նամակ է գրում Վիեննա՝ Միխայիլեան միաբանութեան անդամ Կ. Վարդան Միքայէլեանին։

Տեղեակ պահելով նրա ուղարկած նամակը ստանալու մասին, յայտնում է նաև իր շնորհակալութիւնը Գ. Մեննիշեանի նուիրաբերած Լեւոն Մսերեանցի «Նայերէն բարբառախօսութիւն» գրքոյն իրեն ուղարկելու համար։

«Խնդրեմ,- գրում է Կոմիտասը նամակի շարունակութեան մեջ,- յայտնեցէք իմ սիրելի բարեկամին՝ հայր Գ. Մեննիշեանին իմ խորին շնորհակալութիւնը եւ յարգանք ողջունեցէք նրան»։

Նամակի վերջում Կոմիտասը խնդրում է յայտնել, թե «շարական բառը ինչպես է սպու-գաբանած Նայկազեան բառարանը»:

Նոյն պեղում:

Մայիս 10, երեկոյեան ժամը 8, Բեռլին – Պրոֆեսոր Օսկար Ֆլայշերի նախաձեռնությամբ պեղի է ունենում «Երաժշտական միջազգային ընկերության» երկրորդ նիստը: Նախագահող Օ. Ֆլայշերի բացման խօսքից յետոյ Կոմիտասը գերմաներէն լեզուով կարդում է «Նայոց եկեղեցական և աշխարհիկ երաժշտութիւնը» խորագրով զեկուցումը: Զեկուցման մէջ Կոմիտասը նախ անդրադառնում է Նայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտութեան պարմական ծագումնաբանութեանը, և ապա «Նայոց երաժշտութեանը՝ իբրև անկախ և ինքնուրոյն արուեստ» թեմային: Շարունակելով իր խօսքը՝ նա հայկական երաժշտութիւնը համադրում է միւս արևելեան ազգերի եղանակների հետ: Այնուհետև անդրադառնում է հայոց երաժշտութեան արդիականութեան խնդրին և պարզաբանում է եկեղեցական եղանակների կազմութիւնը՝ բոլոր մանրամասնութիւններով: Յոյց է փայլաւ ժողովրդական եղանակների կազմութիւնը և եկեղեցական եղանակների հետ դրանց ունեցած առնչութիւնները: Մի քանի խօսք նուիրում է հայոց հին երաժշտական խագերին և այժմեան ձայնանիշների դրութեանը:

Զեկուցումն ունենում է բացառիկ մեծ յաջողութիւն, նախագահողը՝ ունկնդիրների կողմից շնորհակալութիւն է յայտնում Կոմիտասին: Այնուհետև ներկաները սեղմում են նրա ձեռքը և թարմ ծաղիկներ մատուցում: Օ. Ֆլայշերը Կոմիտասի ձեռքից վերցնում է զեկուցման տեքստը երաժշտական ընկերութեան հրատարակելիք «Եռամսեայ հաւաքածուի» մէջ զետեղելու համար:

«Մշակ», 1899, թ. 92, էջ 2-3:

Մայիսի 22, Թիֆլիս - «Մշակ» լրագրի 92-րդ համարում «Նամակ Գերմանիայից» խորագրի տակ տպագրւում է Խ. Խոսրովեանի նամակը՝ նուիրում Բեռլինում Օսկար Ֆլայշերի նախաձեռնությամբ կազմակերպւած «Երաժշտական միջազգային ընկերութեան» Բեռլինի մասնաճիւղի հիմնադրման հերթական նիստին: «Երաժշտական միջազգային ընկերութեան նպատակն է,- ասում է «Մշակում»,- ծառայել երաժշտագիտական ուսումնասիրութեանը»: «Բեռլինի մասնաճիւղն ունի արդէն 40 անդամ, որոնց թում է իբրև հայկական երաժշտութեան ներկայացուցիչ՝ Կոմիտաս վարդապետը (աովորում է ի հաշիւ պ. Մանթաշեանի, երաժշտութիւն և այս տարի աւարտելով իր ուսումը՝ սեպտեմբերին վերադառնալու է Էջմիածին)»:

«Մշակ», 1899, թ. 92, մայիս 22, էջ 2-3:

Մայիսի 27, Էջմիածին – Մայր Աթոռում եպիսկոպոսական ձեռնադրութիւն է ընդունում Կեսարիայի հոգևոր առաջնորդ Տրդատ վարդապետ Պալեանը: Խոսքման համաձայն, այս առիթով նա պէտք է Էջմիածնում հանդիպէր Կոմիտաս վարդապետին և նրան

ցոյց տալ իր յայտնաբերած «Նայոց հին երաժշտութեան դասագիրք» վերնագրով աշխատութեան (երգարանի) ձեռագիրը: Քանի որ Կոմիտասը տակաւին չէր վերադարձել Բեռլինից, ուստի նրանց հանդիպումը տեղի չի ունենում:

«Արարար», 1899, թ. 6, էջ 228-229:

Մայիսի 31/19, Բեռլին – Կոմիտասը նամակ է գրում Էջմիածին՝ հայր Կորիւնին՝ «Արդէն մօտենում է վերադարձիս ժամանակը», - գրում է նա եւ խնդրում դիմել Կաթողիկոսին, որպէսզի յանձնարարի, իբրեւ պարտք, իրեն ուղարկել 200 ռուբլի՝ վերադարձը իրականացնելու համար, ժոհիկից կամաց-կամաց մարելու պայմանով:

Կոմիտաս, Նամակներ, էջ 97-98:

Յունիսի 14, երեկոյեան ժ. 8, Բեռլին – Միջազգային երաժշտական ընկերութեան նախագահ եւ Բեռլինի համալսարանի երաժշտութեան պրոֆեսոր Օ. Ֆլայշէրի նախաձեռնութեամբ եւ ջանքերով Բեռլինի Շարենկայի երաժշտանոցի դահլիճում տեղի է ունենում Կոմիտասի երկրորդ դասախօսութիւնն ու համերգը՝ նուիրուած հայկական ժողովրդական եւ եկեղեցական երաժշտութեանը:

«...Այս առաջին անգամն է, - ասում է Օ. Ֆլայշէրը իր բացման խոսքում, - որ Բեռլինում այդպիսի մի դասախօսութիւն է կարդացում...»:

Անհրաժեշտ բացատրութիւնից յետոյ Կոմիտասը ցոյց է տալիս հայկական ժողովրդական ու եկեղեցական եղանակների կազմութեան տարբերութիւնները: Այնուհետեւ նա տեղական (գերմանական) երգիչ-երգչուհիների միջոցով տալիս է քառաձայն համերգ: Եկեղեցական երգերից կատարում են «Փառք քեզ», «Օրհնեցէք, գովեցէք», «Այս խորհուրդը ցաւ», «Ու՛վ, զարմանալի», «Սուրբ ես, Տէր», «Տէր, ողորմեա»: Ժողովրդական երգերից խումբը կատարում է «Մոնա եար», «Անձրեւն եկաւ», «Այ տղա, հերովն արի», «Նով արէք, սարեր», «Նայրիկ, Նայրիկ»: Ապա Կոմիտասը կատարում է քրդերէն՝ «Էլէ գավրէ, մընսպօ», հովուի՝ ոչխարներին ջութ տալու եւ բերելու եղանակը, «Ազ կոյնգեմ»: Մէկ հար քրդական պարի եղանակ, արաբերէն՝ «Արա էյ թագրովնի», «Ջեմիլթամիլ», «Եալէյի», «Արաբի հիջագ», քաճկերէն՝ «Բուզի շեր», «Քիմ դեմիշտիք», «Բահար օլդու», պարսկերէն՝ «Բայեաթի շահնագ», «Բայեաթի բուրպի», հայերէն՝ հայոց պարերից «Նողելլօ ջան», «Նաւար Զուլօ», «Էլա երթիս դփի», «Վարդ կոշիկս», «Տուն արի»:

Քրդական, պարսկական եւ քաճկական երգերը կատարելով՝ Կոմիտասը ցոյց է տալիս դրանց եւ հայկական եղանակների միջեւ եղած տարբերութիւնները: Վերջում Կոմիտասը մատնանշում է ժողովրդական ու հոգեւոր երգերի ընդհանրութիւններն ու տարբերութիւնները:

«Այդ երոյթը, - ասուած է յօդուածի վերջում, - որ դասախօսութեանց հետ միասին տեւեց երկու ժամ, գեղեցիկ տպաւորութիւն թողեց բոլոր ներկայ եղող հանդիսականների վրայ»:

«Նոր-Դար», 1899, թ. 115, էջ 2:

Յունիս 15-16, Բեռլին – «Շարունկա դահլիճում յունիսի կարդացած դասախոսությունից ու փուլած համերգից յետոյ «Բեռլինի օպերայի փնօրէնը,- գրում է Ն. Աճառեանը,- անձամբ կիրառիլէ զինքը իբրեւ օպերայի գլխաւոր երգիչ եւ կիսօպերայի բացառիկ վճարում»։ Կոմիտասը մերժում է այդ առաջարկը. «Իմ երգչի կարողութիւնները,- ասում է նա,- մէկ նպատակի միայն կժառայեն, մեծ ժողովուրդիս երգն ու երաժշտութիւնը ծանօթացնել երաժշտական աշխարհին եւ ապացուցել, որ հայ սպեղծագործ ժողովուրդը սկզբնական դարերէն ունեցեր է ինքնուրոյն երգ ու երաժշտութիւն»։

«Ճամանակակիցները Կոմիտասի մասին», Եր., 1960, էջ 80:

Յունիսի 16, Բեռլին - «Berliner Morgenpost» թերթի հերթական համարում հրապարակում է գերմանացի թղթակցի դրուարական յօդուածը յունիսի 14-ին Շարունկայի երաժշտանոցի դահլիճում հայկական ժողովրդական եւ եկեղեցական երաժշտութեան մասին Կոմիտասի կարդացած դասախօսութեան եւ փուլած համերգի վերաբերեալ: «...Մենք,- գրում է յօդուածի եղիւնակը,- միայն մեր խորին շնորհակալութիւնը կարող ենք յայտնել հայր Կոմիտասին, որ յանձն էր առել այդպիսի մի դժուար գործ՝ ծանօթացնել գերմանացի երաժշտագէտներին հայոց եկեղեցական եւ ժողովրդական երաժշտութեան հետ»:

«Նոր-Դար», 1899, թ. 115, էջ 2:

Յունիս 26 /հպ/, Թիֆլիս - «Նոր-Դար» լրագրի հերթական համարում «Նայկական երաժշտութիւնը Բեռլինում» (նամակ Գերմանիայից) խորագրով հրապարակում է Ա. Էդիգարի յօդուածը նուիրում յունիս 14-ին Շարունկայի երաժշտանոցի դահլիճում Կոմիտասի երկրորդ անգամ կարդացած «Նայկական ժողովրդական եւ եկեղեցական երաժշտութեան մասին» բանախօսութեանն ու համերգի մասին ծաւալուն նկարագրութեանը /տե՛ս նաեւ յունիսի 14-ի գրառումը/:

Կոմիտասը ցոյց է տալիս, թէ հայկական եկեղեցում ինչպէս է կարդացում «Անկարարներ» եւ խմբին երգեցնում է զանազան շարականներ եւ հայ ժողովրդական երգեր:

«Նոր-Դար», 1899, թ. 115, էջ 2:

Յունիսի երկրորդ կէս, Բեռլին – Միջազգային երաժշտական ընկերութեան գիտաժողովում «Նայ ժողովրդական ու հոգեւոր երաժշտութիւնը» թեմայով զեկուցում կարդալուց յետոյ երաժշտական ընկերութեան նախագահ եւ Բեռլինի արքունի համալսարանի երաժշտութեան պատմութեան ուսուցչապետ Օսկար Ֆլայշերը եւ նոյն ընկերութեան քարտուղար ու համալսարանի երաժշտութեան դասախօս դոկտոր Մաքս Զայֆերը Կոմիտասին շնորհում են Ehrendoktor –ի (պատվավոր դոկտորի) կոչում:

«Խորհրդային արուեստ», Եր., 1933, թ. 8-9, էջ 25:

Յունիս 27, Էջմիածին – Ի պատասխան Կոմիտասի՝ Կաթողիկոս Խրիմեանին ներ-

կայացրած խնդրանքի, Կորին վարդապետը նամակով Կոմիտասին փոխակալ է պահում, որ Մայր Աթոռի դիանապետը Սինոդի յանձնարարությամբ նրան է ուղարկում երկու հարիւր ռուբլի դրամ, վերադարձի ճանապարհածախսը հոգալու համար:

ՆԱԱ ֆոնդ թ. 56, կուրկենցաղային բաժին, գ. թ. 378, թ. 20:

Յունիսի 29/17, Բեռլին – Կոմիտասը նամակ է գրում Կ. Կոստանեանին և յայտնում, որ օգոստոսին գալ չի կարող, կվերադառնայ սեպտեմբերին: Նամակից խմացում է, որ նրա կարգացած զեկուցումը իր ուսուցչապետները ցանկանում են հրապարակել Երաժշտական ընկերության գիտական ժողովածուում: Ուշանալու պարճառներից մեկը Կոմիտասը համարում է այն, որ պեքը է յոդուածը խմբագրի ու նախապարաստի փապագրության: Միս կողմից նա փոխակալ է պահում Կոստանեանին, որ «ուսման մեջ սահմանափակ ծրագիրը վերջացնել կարող» է «մօտառապէս օգոստոսի 20-ին, որովհետև դեռ անհրաժեշտ անելիքներ ունենալ»: Նամակի վերջում Կոմիտասը խնդրում է սեպտեմբերից առաջ իրեն չսպասել ճանապարհում:

Կոմիտաս, Նամակներ, էջ 95:

Յունիս 30, Էջմիածին – Գեորգեան ճանապարհի փետուշ Կարապետ Կոստանեանի հրաժարականից յետոյ Կաթողիկոս Մկրտիչ Խրիմեանի թ. 298 կոնդակով ճանապարհի փետուշ է կարգում Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչեանը:

«Արարար», 1899, թ. 7, էջ 191:

Յուլիս 16, Բեռլին – Միջազգային երաժշտական ընկերության նախագահ և Բեռլինի Արքեպիսկոպոսի համալսարանի երաժշտության պրոֆ. պրոֆ. Օսկար Ֆլայշերը անդրադառնում է Կոմիտասի կարգացած զեկուցմանը. «Ձեր հմտության և խորիմաստի դասախոսության միջոցով խորունկ մի հայեացք ձգել փութի դեպի այն երաժշտությունը, որը մեզ համար ցարդ փակ էր և որ մեզ՝ արևմտականներին շար բան ուսուցանել կարող է»:

ՉԱԳԱԹ, Կոմիտաս ֆ. 57, Թ. Ազարեան, էջ 28:

Յուլիս 16, Բեռլին – Միջազգային երաժշտական ընկերության Բեռլինի մասնաճիւղի քարտուղար դոկտոր Մաքս Զայֆերը գրում է նամակ Կոմիտասին և շնորհակալություն է յայտնում նրան զեկուցման առիթով ցուցաբերած սիրայօժարության համար: «Դրանով Դուք վաստակեցիք ոչ միայն մեր մասնաճիւղի հիացմունքը, այլև Ձեր հայրենիքի քաղաքակրթության արժանի գնահատականը»:

Նոյն փոխում:

Օգոստոս մինչև 20, Բեռլին – Կոմիտասը վերջացնում է Ֆրեդերիկ Վիլհելմ արքայական համալսարանում ուսման համար սահմանափակ ծրագիրը և ատարվում է այդ համալսարանի երաժշտա-փիլիսոփայության պատմության բաժինը:

ՉԱԳԱԹ, Կոմիտաս ֆ. 1098:

Սեպտեմբեր 2, Բեռլին – Կոմիտասի անունով լրացնում է Ֆրեդերիկ Վիլհելմ արքայական համալսարանի փիլիսոփայության բաժինը ատարված լինելու վերաբերյալ վկայական:

ՉԱԳԱԹ, Կոմիտաս ֆ.:

Նոյն օրը, Բեռլին – Կոմիտասի անունով Ռիխարդ Շմիդտը լրացնում է մասնաժողովի անդամության ատարված լինելու վերաբերյալ համալսարանական վկայական:

Նոյն փեղում, ֆ. 65:

Յունիս-սեպտեմբեր, Բեռլին – Կոմիտասին առաջարկում են համալսարանն ատարելուց յեզմյ մնալ Բեռլինում և դասախոսություններ կարդալ ուսանողության համար: Կոմիտասը մերժում է այդ առաջարկը «իր երկիրը վերադառնալու, ինքզինքը իր քաղաքին արուեստի վերանորոգմանը նուիրելու համար»:

«Անահիպ», 1901, թ. 6-7, էջ 143:

Սեպտեմբեր 1-12 (հին տոմարով), Վաղարշապատ - Բեռլինից Էջմիածին է վերադառնում Կոմիտաս վարդապետը:

ՆԱԱ, ֆ. 312, թղթ. 26:

Սեպտեմբեր 1-14 /հին տոմարով/, Էջմիածին - Բեռլինում երաժշտական բարձրագույն կրթություն ստացած Կոմիտասը Գեորգեան ճեմարանում նշանակվում է եկեղեցական երաժշտության ուսուցիչ և վարում է Մայր փառարկի բազմաձայն երգչախմբի ղեկավարի պաշտօնը: Երկու շաբաթյա ընթացքում նա ճեմարանի աշակերտներից կազմում է մի քառաձայն երգչախումբ, սովորեցնում է Բեռլինում իր դաշնակած երգերը և եռանդուն կերպով նախապարաստում է ճեմարանի 20-ամեակին նուիրում փոսկապարտիկները: Կոմիտասի առաջին գործերից մեկն է լինում ճեմարանում նոր, բարձր հիմքի վրա դնել երոպական նորագրության ուսուցումը:

«Արարատ», 1901, թ. 4, էջ 215:

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», 1960, էջ 65:

Սեպտեմբեր 26, Երեկոյեան Ժամը 6, Էջմիածին – Ժամերգությունից յետոյ ճեմարանի հանդիսասրահում Կրեդի է ունենում գրական-գեղարուեստական երեկոյ: «Մանգարմունք հայոց եկեղեցական երգեցողության» թեմայով բանախօսում է Կոմիտաս վարդապետը: «Այդ լուրջ ուսումնասիրությունը,- ասում է «Արարատ» ամսագրում,- գեղեցիկ օրինակով պարզաբանությամբ լինելով մանաւանդ իւր Կրեականի մէջ բոլորովին նոր բան, շատ հեղափոխական էր ներկայ բանիմաց հասարակության համար: Կոմիտասը միաժամանակ կարգաւորում է հայոց եւ ասորաց երգերի եւ ձայների համեմատություն՝ ցոյց տալով դրանց նմանությունն ու Կրեականին:

«Արարատ», 1899, թ. 10-11, էջ 441:

«Մշակ», 1899, թ. 186, էջ 2:

Դեկտեմբեր 9, Էջմիածին – Կոմիտասը մասնակցում է Գեորգեան ճեմարանի ուսումնական խորհրդի Զ. Նիսրին: Այլուայ հարցերի հետ ժողովում քննարկում է Նր. Աճառեանի «Արմատական բառարանի» ձեռագիրը մրցանակի ներկայացնելու հարցը:

ՆԱԱ, ֆ. 312, թղթ. 27, վավ. 21, թ. 36:

Դեկտեմբեր 28, Վաղարշապատ - «Արարատ» ամսագրում քաղաքապետ հրապարակում է Մկրտիչ Ա Կաթողիկոսի 1311-րդ կոնդակը, որով սինոդին յանձնարարում է «տալ քառամսեայ ռոճիկ Կ. Կոմիտաս վարդապետին եւ շնորհել նմա զընկալեալն վոխանակությունը 200 ռ.»:

«Արարատ», 1899, թ. 12, էջ 484:

Նոկտեմբեր-դեկտեմբեր, Լայպցիգ - Միջազգային երաժշտական ընկերության «Zeitschrift der internationalen...» պարբերականում հրապարակում է Բեռլինում 1899 թ. մայիսի 10-ին եւ յունիսի 14-ին Կոմիտասի կարդացած բանախօսության ու Կրեականի համերգի վերաբերեալ ծառայուն հաղորդագրություն:

Լայպցիգ, 1899, I տարի, I Կրեական:

Նոկտեմբեր-դեկտեմբեր, Լայպցիգ - Միջազգային երաժշտական եռամսեայ հանդէսի առաջին համարում գերմաներէն լեզուով հրապարակվում է Կոմիտասի «Նայ եկեղեցական երաժշտություն» խորագրով յօդուածը (էջ 54-64):

Կոմիտաս, Յօդուածներ եւ ուսումնասիրություններ, Եր., 1941, էջ 153: